Գյուղական ֆինանսավորման կառույցի (www.raed.am) կողմից իրականացվող ֆինանսական աջակցության ծրագրեր

Գյուղական ֆինանսավորման կառույցը (այսուհետ՝ ԳՖԿ) 2005 թվականից իրականացնում է գյուղատնտեսության զարգացմանը նպաստող միջազգային ծրագրեր՝ փոխառություններ տրամադրելով ծրագրերին մասնակից ֆինանսական կառույցներին՝ գյուղական և սահմանամերձ տարածքներում վարկավորում իրականացնելու նպատակով:

ԳՖԿ-ի կողմից փոխառությունների տրամադրման գործընթացը կարգավորվում է միջազգային համաձայնագրերով, ԳՖԿ Գյուղական ներդրումների Ուղեցույցով և եռակողմ փոխառության համաձայնագրերով:

ԳՖԿ-ի ծրագրերը

ԳՖԿ-ն 2005-2016թթ. ընթացքում իրականացրել է և շարունակում է իրականացնել 5 միջազգային ծրագրեր, որոնց ֆինանսավորման աղբյուրներն են միջազգային դոնոր կազմակերպությունները և ՀՀ պետական բյուջեի կողմից ֆինանսավորվող 2 ծրագրեր:

Միջազգային ծրագրերն են՝

1. Գյուղական տարածքների տնտեսական զարգացման (ԳՏՏԶ),
2. Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսությունների զարգացման (ԳՁՓԱԳԶ),
3. Շուկայական հնարավորություններ ֆերմերներին (ՇՀՖ),
4. Դանիական թագավորության կողմից դրամաշնորհային ծրագիր այգեգործական վարկերի համար (ԴԹ դրամաշնորհ),
5. Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն վարկային Ծրագիրը (ԵԳՖԱԾ):

ՀՀ պետական բյուջեի կողմից ֆինանսավորվող ծրագրերն են՝

1. ՀՀ Կառավարության 2011թ. մարտի 31 N-349-Ն որոշմամբ իրականացվող Գյուղատնտեսության ոլորտին տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը (Սուբսիդավորում)
2. ՀՀ Կառավարության 2014թ. մարտի 06 N 275-Ն որոշմամբ երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը, համաձայն որի ԳՖԿ-ն որոշակի գործառույթներ է իրականացնում (Մայրության նպաստներ):

Սուբսիդավորման ծրագրով ԳՖԿ-ն իրականացրել է շուրջ 4 միլիարդ 335 միլիոն ՀՀ դրամի գումարի չափով սուբսիդավորում և մոնիտորինգներ, իսկ մայրության նպաստներով ԳՖԿ-ն իրականացնում է մոնիտորինգներ և տալիս է վարկի նպատակայնության վերաբերյալ եզրակացություններ:

Աղյուսակ 1-ում համառոտ ներկայցված են ԳՖԿ-ի կողմից շրջանառվող միջազգային ծրագրերով ստացված ընդհանուր ֆոնդերը՝ ըստ ծրագրերի վերջին հաշվետու ամսվա դրությամբ:

Աղյուսակ 1.

Ծրագրերը	Ֆինանսավորմա աղբյուրները	Ֆոնդերի մեծությունը 31.08.2016թ.
ԳՏՏԶ	Գյուղական զարգացման միջազգային հիմնադրամ(ԳԶՄՀ)	8,641,764.0 ԱՄՆ դոլար

ԳԶՓԱԳԶ	Համաշխարհային Բանկ	5,113,371.0 ԱՄՆ դոլար
		91, 144, 500.0 ՀՀ դրամ
ՇՀՖ	ԳԶՄՀ	1,989,000.0 ԱՄՆ դոլար
ԴԹ գրանտ	Դանիական թագավորություն	686,000,000.0 ՀՀ դրամ
ԵԳՖԱԾ	ԳԶՄՀ	0.0
Ընդամենը շրջանառվող ֆոնդեր ԱՄՆ դոլարով		15,744,135.0 ԱՄՆ դոլար
Ընդամենը ստացված ֆոնդեր ՀՀ դրամով		777,144,500.0 ՀՀ դրամ

ԳՖԿ-ի մոդելը

ԳՖԿ-ն ինքնաֆինանսավորվող կազմակերպություն է: Լինելով շահույթ չհետապնդող պետական կառույց՝ ԳՖԿ-ն վարում է միջազգային ստանդարտներին համապատասխան կառավարչական հաշվապահություն, որտեղ հաշվառվում է ԳՖԿ-ի գործունեությունից ստացված շահույթը, որը 2015թ. դեկտեմբերի 31 դրությամբ կազմել է 725 119 000 (Յոթ հարյուր քսանհինգ միլիոն մեկ հարյուր տասնինը հազար) ՀՀ դրամ:

ԳՖԿ-ի Վարկային պորտֆելը

N	Բանկ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ
1	ԻՆԵԿՈ ԲԱՆԿ	0,00	36 869 568,30
2	ԱՐԴՇԻՆԲԱՆԿ	61 315,47	258 632 900,00
3	ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ	52 219,10	10 904 404,60
4	ՅՈՒՆԻԲԱՆԿ	231 302,39	0,00
5	ԱՆԵԼԻՔԲԱՆԿ	105 678,83	137 282 230,87
6	ՀԱՅ ԲԻԶՆԵՍ ԲԱՆԿ	647 872,37	359 202 603,60
7	ԱՐՑԱԽԲԱՆԿ	193 795,00	0,00
8	ՍԷՖ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼՈՒՎԿ	0,00	35 010 071,40
9	ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ ՈՒՎԿ	1 074 765,34	392 662 527,90
10	ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ	253 787,61	415 002 983,80
11	ՔԱՐԴ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ	601 424,00	502 713 561,00
12	ԷԿԼՈՖ ՈՒՎԿ	86 933,47	3 707 254,70
13	ԿԱՄՈՒՐՋ ՈՒՎԿ	764 451,31	776 462 322,90
14	ԳԼՈԲԱԼ ՈՒՎԿ	877 778,28	702 501 765,50
	Ընդամենը վարկային պորտֆել	**4 951 323,17**	**3 630 952 194,57**
	Չտեղաբաշխված ֆոնդեր	**5 211 869,33**	**385 748 656,75**
	Ընդամենը Ֆոնդեր	**10 163 192,50**	**4 016 700 851,32**

2006-2016թթ. ընթացքում միջազգային ծրագրերով ԳՖԿ-ի կողմից տրամադրված ենթավարկերի գումարները և շահառուների քանակը:

Տրամադրված Վարկ	Տրամադրված վարկի քանակ	Տրամադրված վարկի գումար ԱՄՆ դոլարով
Հայտային եղանակով	2 989	56 400 279

Տրանշային եղանակով	3 866	10 087 117
Ընդամենը՝	**6 855**	**66 487 396**

ԳՖԿ-ն որպես վարկատու կազմակերպություն հանդես է գալիս միայն միջազգային համաձայնագրերի շրջանակներում: **ԳՖԿ-ն չի կարող ուղիղ ֆինանսավորում իրականացնել ծրագրին մասնակից շահառուներին, քանի որ այդ իրավունքը սահմանափակված է միջազգային համաձայնագրի կետերով: Համաձայն Միջազգային համաձայնագիր N653-AM-ի Հավելված (1)-ի Ա ենթաբաժնի (1) կետի՝**

Վարկային միջոցները ԳՖԿ-ի միջոցով պետք է ուղղվեն նախառարակավորում անցած և Փոխառուի (Հայաստանի Հանրապետության) ու Հիմնադրամի (ԻՖԱԴ) կողմից հաստատված, առևտրային բանկերին և այլ ընդունելի ֆինանսական կառույցներին, որպես Ծրագրի տարածքում գյուղական միջին և փոքր արտադրողների ու ձեռնարկատերերի համար համապատասխան ֆինանսական ծառայությունները մատչելի դարձնելու միջոց, այսպիսով խթանելով գյուղական տնտեսական գործունեության կայուն աճը:

Ինչպես նաև համաձայն նույն միջազգային համաձայնագրի Հավելված (1)-ի Ա ենթաբաժնի (4) կետի՝ ԳՖԿ-ի գործառույթները պետք է կազմակերպվեն և իրականացվեն հետևյալ հիմնական սկզբունքներին համապատասխան.

Ա.ԳՖԿ-ն վերաֆինանսավորվող կառույց է, այսինքն մասնակից ֆինանսական կազմակերպությունները (ՄՖԿ) իրավասու են համապատասխան շահառուներին վերաֆինանսավորել ամբողջ վարկերը, կամ վարկի որոշակի մասը, ԳՖԿ-ի կողմից հաստատված տոկոսադրույքով:

Բ. Վերաֆինանսավորման ենթակա վարկերի տևողությունը 1-7 տարի է, մեկ վարկի առավելագույն վերաֆինանսավորման արժեքը սկզբնական շրջանում սահմանված է 150,000 ԱՄՆ դոլար, առավելագույն արտոնյալ ժամկետը՝ 18 ամիս:

Համաձայն AM-653AM միջազգային համաձայնագրի հավելված (1), (4)-րդ ենթակետի (ե.) կետի՝

"Քանի որ վարկային ողջ ռիսկը կրում են ՄՖԿ-ները, ուստի վերջնական ենթավարկառուներին վարկերը պետք է տրամադրվեն գրավային, տոկոսային և արտոնյալ ժամկետի վերաբերյալ ՄՖԿ-ի սեփական քաղաքականության համապատասխան:"

ԳՖԿ-ի վարկային պրոդուկտները

ԳՖԿ-ն վարկերը տրամադրում է տարբեր եղանակներով՝ հայտային և տրանշային:

ա) Հայտային տրամադրման եղանակ

Հայտային եղանակով կարող են տրամադրվել մինչև 150 000 ԱՄՆ դոլարով կամ դրան համարժեք ՀՀ դրամով ենթավարկերը: Այս եղանակի դեպքում ֆինանսական կառույցների կողմից ներկայացված հայտերը հաստատվում են անհատապես: Հայտային եղանակը կիրառվում է հիմնականում առավել խոշոր ենթավարկերի հաստատման համար:

բ) Տրանշային տրամադրման եղանակ

2012թ. ԳՖԿ-ի կողմից մշակվել է նոր վարկային պրոդուկտ, որը կոչվում է ենթավարկերի տրամադրման տրանշային եղանակ:

Այս պրոդուկտի հիմնական նպատակն է՝

- ֆինանսավորել միայն փոքր բիզնեսը,
- կրճատել թղթաբանությունը,
- մրցակցային պայմաններ ստեղծել փոխառությունների տրամադրման համար, դրանով իսկ ներազդելով ենթավարկային տոկոսադրույքների իջեցմանը:

Տրանշային եղանակի դեպքում ենթավարկի գումարը չի կարող գերազանցել 10 000 ԱՄՆ դոլարը կամ 4 000 000 ՀՀ դրամը:

Այս եղանակով փոխառությունները տրամադրվում են մրցույթային կարգով: Մրցույթ է հայտարարվում մասնակից ֆինանսական կառույցների միջև: Մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվում այն կառույցը, որն առաջարկում է ենթավարկեր տրամադրելու համար ամենացածր տոկոսադրույքը:

Առաջարկվող տոկոսադրույքը չունի առավելագույն շեմ, այն տատանվում է 14-16% տարեկան տոկոսադրույքի սահմաններում:

գ) Այգեգործական վարկեր

Թիվ COFIN-DK-817–AM համաձայնագրի շրջանակներում ՀՀ կառավարությունը Դանիական Թագավորությանից ստացել է դրամաշնորհ, որից շուրջ 2.4 մլն ԱՄՆ դոլարը հատկացվել է ԳՖԿ-ին այգեգործական վարկավորումներ իրականացնելու նպատակով:

2015թ. ընթացքում ԳՖԿ-ն Մասնակից ֆինանսական կառույցների հետ կնքել է եռակողմ համաձայնագրեր Այգեգործական վարկերի ծրագրի մեկնարկի նպատակով:

Փոխառությունը մասնակից ֆինանսական կառույցներին տրամադրվում է մրցութային կարգով : Նախընտրությունը տրվում է այն մասնակից ֆինանսական կառույցներին, որոնք ներկայացնում են ենթավարկեր տրամադրելու ամենացածր էֆեկտիվ տոկոսադրույքի առաջարկը, որը չի կարող գերազանցել տարեկան 8.5% տոկոսադրույքը:

Գյուղական ֆինանսավորման կառույցի կողմից մասնակից ֆինանսական կառույցներին փոխառությունը տրամադրվում է միայն ՀՀ դրամով՝ տարեկան 2 % տոկոսադրույքով: Տոկոսադրույքը սահմանելիս հաշվի է առնվել այն, որ ֆինանսական միջոցները դրամաշնորհային են և չեն առաջացնում որևէ վարկային կամ փոխարժեքային ռիսկեր:

Այս ծրագիրը սկսել է իրականացվել 2016 թվականի փետրվարից: Ֆոնդերի տեղաբաշխման իրավունք ձեռք բերած կազմակերպությունները վերջնական ենթավարկառուներին վարկերը տրամադրում են տարեկան 4 % - 5.22 % էֆեկտիվ տոկոսադրույքով:

Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն վարկային Ծրագիր (ԵԳՖԱ)

2015թ. ընթացքում ԳՖԿ-ն ՀՀ ֆինանսների նախարարության հետ կնքել է Փոխըմբռնման Հուշագիր, որը նախապայմաններ է ստեղծում ծրագրի մեկնարկի համար: Սույն փաստաթղթում ամրագրված են այն պայմանները, որը կողմերը ստանձնել են ծրագրի իրականացման համար:

2016թ. ընթացքում ԳՖԿ-ն մշակել է փոխառության համաձայնագրերի նոր լրացում ԵԳՖԱ ծրագիրը ընդգրկելու նպատակով: Ինչպես նաև փոփոխության են ենթարկվել նախկինում գործող վարկավորման պայմանները՝ այն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

Այդ փոփոխությունների նպատակն է՝

- կրճատել թղթաբանությունը,
- ճկուն դարձնել ենթավարկերի մարման ժամանակացույցերի հետ կապված արտոնությունները,
- բարելավել շրջանառու միջոցների ֆինանսավորման պայմանները,
- տրանշային պրոդուկտները հասանելի դարձնել նաև ծրագրին մասնակից առևտրային բանկերին, ինչպես նաև փոխել տրանշային պրոդուկտների պայմանները,
- կրճատել գրավների պահանջի իրավունքի զիջման հետ կապված փաստաթղթաշրջանառությունը:

ԳՖԿ-ն նախագիծը ներկայացրել է ԳԶՄՀ-ին և ստացել է վերջինիս համաձայնությունը:

2016թ. օգոստոսին Նախագիծը ներկայացվել է ՀՀ Ֆինանսների նախարարություն ստորագրման նպատակով: Սույն գործընթացը դեռևս ստորագրման փուլում է:

Սուբսիդավորման ծրագրի պայմաններն են՝

Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրն իրականացվում է՝ համաձայն ՀՀ կառավարության 31 մարտի 2011 թվականի N 349-Ն որոշմամբ հաստատված Կարգի:

Համաձայն Կարգի՝ ԳՖԿ-ի և Ֆինանսական կազմակերպությունների միջև կնքվել է համագործակցության պայմանագրեր, որով իրականացվում է Սուբսիդավորման ծրագիրը:

Սուբսիդավորման գործընթացը

Համագործակցող բանկերը տրամադրում են ծրագրի պայմաններին համապատասխան վարկեր, այնուհետև համաձայն հաստատված ձևաչափերի՝ ներկայացվում են ԳՖԿ-ին սուբսիդավորման նպատակով: Վարկառուի կողմից կատարված յուրաքանչյուր վճարումից հետո բանկի կողմից ներկայացվում է ֆինանսավորման հայտ ԳՖԿ-ին, որից հետո Սուբսիդավորված տոկոսակետին համարժեք գումարը ԳՖԿ-ի կողմից փոխանցվում է Վարկառուի անձնական հաշվեհամարին: ԳՖԿ-ի կողմից կատարվում են վարկերի նպատակայնության մոնիտորինգներ: Կատարված աշխատանքների վերաբերյալ եռամսյակային կտրվածքով բանկերի կողմից ԳՖԿ է ներկայացվում ամփոփ հաշվետվություն, որը ներառում է տեղեկատվություն տրամադրված վարկերի քանակի, գումարի, նպատակի, տարածքի և սուբսիդավորված գումարների վերաբերյալ: Ստացված ինֆորմացիան ԳՖԿ-ի կողմից խմբագրվում է և ամփոփ տեսքով ներկայացվում է ՀՀ կառավարություն, ՀՀ գյուղատնտեսության և ֆինանսների նախարարություններ:

ԳՖԿ-ն վերը նշված ծրագրի շրջանակներում համագործակցում է «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի, «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի, «Արդշինբանկ» ՓԲԸ-ի, «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի և «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի հետ:

Սուբսիդավորման ենթակա վարկերի պայմաններն են՝

Բանկերի կողմից վարկերը տրամադրվում են առավելագույնը 14% տարեկան տոկոսադրույքով, որից 6 տոկոսային կետը սուբսիդավորվում է:

Վարկի պայմաններն են՝

1. Նպատակը՝ գյուղատնտեսություն
2. Վարկի գումարը՝ մինչև 3 մլն ՀՀ դրամ,
3. Վարկի արժույթը՝ ՀՀ դրամ,
4. Վարկի ժամկետը՝ 2 տարի,
5. Վարկի տոկոսադրույքը՝ առավելագույնը տարեկան 14 %,
6. Մայր գումարի և տոկոսադրույքի արտոնյալ ժամանակահատվածը՝ առնվազն 6 ամիս,
7. Տարածքը՝ ՀՀ ողջ տարածքով: